

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 մարտի 2001 թվականի N 167

քաղ. երևան

Հայաստանի Հանրապետության կառավարության
2001 թվականի աշխատանքային ծրագրի կատարումն
ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու
մ ա ս ի ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի աշխատանքային ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը (կցվում է):
2. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել տեղեկանք սույն որոշմամբ հաստատված ցանկում ներառված միջոցառումների կատարման ընթացքի մասին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի մարտի 9-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի աշխատանքային ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
1. «Առողջապահության համակարգի օպտիմալացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	առողջապահության համակարգի բարելավում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. փետրվար	
2. «Դոկագործ» ՓԲԸ-ի գործունեության կարգավորմանն ուղղված միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ծեռնարկության վերագործարկում, արտադրության ընդլայնում, արտադրատեսակների արտադրության կազմակերպում, 700 աշխատատեղի ստեղծում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. փետրվար	
3. Պետական ծառայողների եկամուտների, գույքի և ծախսերի հայտարարագրման պետական ծրագրի հաստատում, դրանից բխող ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը	պետական կառավարման համակարգի բարելավում, հարկման տեսակետից հայտարարագրման ենթակա եկամուտների հարկման բազա ներառում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն այլ շահագրգիռ մարմիններ	2001 թ. փետրվար	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
4. Մաքսային վարչարարության բարեփոխումների ծրագրի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մաքսային վարչարարության կատարելագործում, մասնավորապես, փաստաթղթաշրջանառության պարզեցում, դասակարգման ընթացակարգերի կատարելագործում, բեռների ստուգման ժամանակ ընտրողականության սկզբունքների զարգացում, մաքսային արժեքի որոշման մեխանիզմների կատարելագործում, 2001 թվականի ընթացքում ASYCUDA համակարգի ներդրման գործընթացի ավարտ և ազգային տեղեկատվական միասնական համակարգի ստեղծում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. փետրվար	Նախատեսվում է բարեփոխումների ծրագրին ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության օժանդակությունը:
5. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Շիրակի մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	առողջապահության համակարգի բարելավման ծրագրի իրականացում, հիվանդանոցային ցանցի ռացիոնալացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. փետրվար	
6. «Հայաստանի ազգային գրապալատ» պետական հիմնարկ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ազգային պատմամշակութային արժեքների և ֆոնդերի պահպանում	ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչություն	2001 թ. փետրվար	
7. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2001 թ. պետական ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. փետրվար	շահագրգիռ մարմիններ

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
8. «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտությունների ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկի ռացիոնալացում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. փետրվար	
9. «Ձեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ձեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի գործունեության նորմատիվային ապահովում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. փետրվար	
10. «Ցուցահանդեսների, միջազգային տոնավաճառների կամ համանման միջոցառումների շրջանակներում ապրանքների մաքսատուրքի վճարումից ազատման նմուշային քանակությունների չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հարկային և մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարում, ՀՀ օրենսդրության նորմերի բնականոն գործողության ապահովում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. փետրվար	
11. «Առանց մաքսատուրքի վճարման Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով որպես ուղեկցվող և չուղեկցվող բեռ տեղափոխվող ապրանքների բնահրային չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հարկային և մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարում, ՀՀ օրենսդրության նորմերի բնականոն գործողության ապահովում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. փետրվար	
12. «Մաքսային հսկողության իրականացման մեթոդիկան սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հարկային և մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարում, ՀՀ օրենսդրության նորմերի բնականոն գործողության ապահովում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. փետրվար	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
13. «Մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հարկային և մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարում, ՀՀ օրենսդրության նորմերի բնականոն գործողության ապահովում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. փետրվար	
14. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	սոցիալական աջակցության ոլորտում իրավահարաբերությունների կանոնակարգում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	2001 թ. փետրվար	
15. «Գիտական կադրերի որակավորման կարգը, իրավական հիմքերը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	գիտական կադրերի ընտրության և մասնագիտական գիտելիքների գնահատման չափանիշների հաստատում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ ԳԱԱ	2001 թ. փետրվար	
16. «Պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման մեկնարկային գները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հողերի օտարման գործընթացի իրականացում	ՀՀ վարչապետի 2000 թ. մարտի 23-ի N 128 որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով	2001 թ. փետրվար	
17. «2001 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայությունների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	պետության կողմից երաշխավորված բուժօգնության կազմակերպում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալություն	2001 թ. փետրվար	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
18. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների և ուղղությունների, պետության պարտավորությունների, ֆիզիկական կուլտուրային և սպորտին պետական աջակցություն ցուցաբերելու ձևերի սահմանում, զանգվածային ֆիզիկական կուլտուրայի և բարձրակարգ սպորտի զարգացման համար պայմանների ստեղծում	ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն	2001 թ. փետրվար	
19. «Հրատարակությունների պարտադիր օրինակի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	պատմամշակութային արժեքների անձեռնմխելի ֆոնդերի ստեղծում և համալրում	ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչություն	2001 թ. փետրվար	
20. «Հայաստանի Հանրապետության գիտության բնագավառի պետական կառավարման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	գիտության կառավարման համակարգի հստակեցում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ ԳԱԱ ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. փետրվար	
21. «Մաքսային ձևակերպումների համար սահմանված վայրերից և մաքսային ձևակերպումներն իրականացնող մաքսային մարմնի աշխատանքային ժամերից դուրս մաքսային ձևակերպումների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հարկային և մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարում, ՀՀ օրենսդրության նորմերի բնականոն գործողության ապահովում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. փետրվար	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
22. «Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների ընտրողական զննմամբ ապրանքները բաց թողնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հարկային և մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարում, ՀՀ օրենսդրության նորմերի բնականոն գործողության ապահովում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. փետրվար	
23. «Մաքսային վիճակագրության տվյալների հավաքագրման, ներկայացման և հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հարկային և մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարում, ՀՀ օրենսդրության նորմերի բնականոն գործողության ապահովում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. փետրվար	
24. «Բարեգործության և հովանավորության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մարդասիրական օգնության և բարեգործության բնագավառի օրենսդրական կանոնակարգում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	2001 թ. փետրվար	
25. «Մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում 2000 թվականի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքների մասին» արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մարդասիրական օգնության և բարեգործության բնագավառում 2000 թ. արդյունքների գնահատում և 2001 թ. հիմնական անելիքների նախանշում	ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողով	2001 թ. փետրվար	
26. 2001 թ. ընթացքում պետական գույքի մասնավորեցման (կամ լուծարման) գործընթացը կանոնակարգելու վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը	մասնավորեցման գործընթացի արդյունավետ կազմակերպում	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն	2001 թ. փետրվար	
27. «Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	առողջապահության համակարգի բարելավման ծրագրի իրականացում, հիվանդանոցային ցանցի ռացիոնալացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. փետրվար	
28. «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	աշխատանք փնտրող չգրաված քաղաքացիների, այդ թվում՝ գործազուրկների ժամանակավոր զբաղվածություն	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	2001 թ. փետրվար	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
29. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սպայական անձնակազմի, ինչպես նաև շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների պարտքերը մարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	կենսաթոշակների գծով պարտքերի մարում	ՀՀ կառավարությանն առընթեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ	2001 թ. փետրվար	
30. «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	պետական սեփականություն հանդիսացող հողերը օտարման և օգտագործման տրամադրելու խնդիրների կանոնակարգում, հողերը վարձակալությամբ տրամադրելու մրցույթների անցկացման կարգի սահմանում	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2001 թ. փետրվար	
31. «Ընդհանուր միջնակարգ կրթությանը նախատեսված բյուջետային հատկացումների չափերի ավելացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ընդհանուր միջնակարգ կրթությանը նախատեսված բյուջետային հատկացումների չափերի ավելացում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. փետրվար	
32. «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ Որոտան գետի վրա» օբյեկտի շինարարության մասին ՀՀ կառավարություն տեղեկատվությունը ներկայացնելը	30 գծմ հորատանցում N 2 թունելախորշում, հակադարձ թաղի բետոնապատում NN 6, 7, 8, 9 թունելախորշերում և այլ աշխատանքներ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. փետրվար	ՀՀ 2001 թ. պետական բյուջե (նախատեսված է 1450.0 մլն դրամ)

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
33. Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեներից թերֆինանսավորված ծախսերի ՀՀ 2001 թվականի պետական բյուջեից փոխհատուցման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Էներգետիկայի համակարգի ֆինանսական առողջացում	ՀՀ էներգետիկայի նախարարություն	2001 թ. փետրվար	
34. «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	սնանկացման ընթացակարգերի հստակեցում ու դրանց արդյունավետության բարձրացում, մասնավորապես, կառավարիչների վարձատրման սանդղակի վերանայում, փոքր ընկերությունների սնանկացման պարզեցված ընթացակարգերի ներդրում, ինչպես նաև օրենքի ներքին հակասությունների վերացում	ՀՀ արդարադատության նախարարություն	2001 թ. ապրիլ	
35. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մտավոր սեփականության իրավունքների հետ կապված խնդիրների լուծումը կողմերի փոխհամաձայնությամբ իրականացնելու հնարավորության սահմանում, մտավոր սեփականության իրավունքների հետ կապված հարաբերությունների հետազոտական ազատականացում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալություն	2001 թ. փետրվար	
36. Առողջապահական ծառայություններ մատուցողների նկատմամբ կուտակված բյուջետային պարտքերի մարման ժամանակացույցի հաստատում և հրապարակում	կուտակված պարտքերի մարման փանցիկ համակարգի սահմանում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալություն	2001 թ. փետրվար	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
37. «Ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրականացման արդյունքում ավելացված արժեքի հարկի առաջացող գերավճարների հետստացման համար դիմելու դեպքում գերավճարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ավելացված արժեքի հարկի գերավճարների հետստացման օրենքով սահմանված մեխանիզմների լիարժեք գործողություն	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. փետրվար	
38. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գանձումը փորձնական կարգով հարկային մարմինների կողմից իրականացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գանձման արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ	2001 թ. փետրվար	
39. Ընտանեկան նպաստներ ստանալու համար դիմողների և ընտանեկան նպաստներ ստացողների տվյալների բազայի ստեղծում	ընտանեկան նպաստների համակարգի հասցեականության բարելավում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	2001 թ. փետրվար	
40. Առողջապահական ծառայությունների գնման պայմանագրային նոր համակարգի ներդրում՝ հիմնված մատուցված ծառայությունների դիմաց գլոբալ բյուջեի վրա	պետական առողջապահական ծրագրերի արդյունավետության բարձրացում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալություն	2001 թ. փետրվար	
41. 2001 թվականի համար առողջապահական ընտրանքային պայմանագրերի կնքման չափանիշների մշակում և հաստատում, փորձնական կարգով մի քանի հիվանդանոցների համար ընտրանքային պայմանագրերի կնքման ծրագրի իրականացում	պետական առողջապահական ծրագրերի արդյունավետության բարձրացում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալություն	2001 թ. փետրվար	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
42. ՀՀ կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալության կանոնադրության նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	գործակալության խնդիրների հստակեցում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալություն	2001 թ. փետրվար	
43. Պետական կառավարման համակարգի կառուցվածքային բարեփոխումների հայեցակարգի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	քաղաքացիական ծառայության արդյունավետ համակարգի կայացում	ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով	2001 թ. փետրվար	
44. «Ապահովագրական համակարգի և ապահովագրական շուկայի զարգացման համալիր միջոցառումների ծրագրի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ապահովագրական համակարգի զարգացում, ընկերությունների ֆինանսական կայունության երաշխիքների ապահովում, մասնավորապես, 2002-2005 թվականների ընթացքում ապահովագրական ընկերությունների կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափի ավելացման ժամանակացույցի սահմանում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. փետրվար	
45. «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողովը ներկայացնելը	գանձապետական համակարգին վերաբերող իրավահարաբերությունների կանոնակարգում	ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մարտի 1	
46. «Հայաստանի Հանրապետության Նախագահի, ինչպես նաև օրենսդիր, գործադիր, դատական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների, կենտրոնական բանկի ղեկավար աշխատողների, կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակում՝ Միջազգային արժուքային հիմնադրամից ստացված առաջարկությունների հիման վրա, և լրամշակված նախագիծը ՀՀ Ազգային ժողովը ներկայացնելը	բարձրաստիճան պետական պաշտոնյաների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման գործուն մեխանիզմների ներդրում	ՀՀ պետական եկամուտների նախարարությունը ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մարտի 1	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
47. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Կենտրոնացված կարգով գնումների իրականացում պահանջող գնման նվազագույն չափի բարձրացում և փոքր ու միջին ձեռնարկատիրության խթանում, կենտրոնացված գնումների արդյունավետության բարձրացում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
48. «Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մայիսի 5-ի N 340 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	բնապահպանական տնտեսական մեխանիզմների կատարելագործում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
49. ՀՀ Տավուշի մարզի Հաղարծին գյուղի սողանքային գոտում գտնվող բնակելի տների բնակիչների բնակարանային պահովվածության խնդրի լուծում	սողանքային գոտում գտնվող բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն Տավուշի մարզպետ	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
50. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	գիտության ֆինանսավորման կանոնակարգում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
51. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	կրթության ոլորտի իրավական կարգավորվածության բարելավում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
52. «Հատուկ ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հատուկ ուսումնական հաստատությունների գործունեության իրավական ապահովվածություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
53. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմաների փորձաքննությունն իրականացնող մասնագիտական փորձագիտական խորհուրդների ձևավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	գիտության կառավարման համակարգի իրավական ապահովվածություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
54. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու կանոնակարգում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
55. «Բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական պատվերի ձևավորման և տեղաբաշխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	անձի կրթական պահանջմունքների և հասարակական պատվերի բավարարում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
56. «Դատավորի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	կենսաթոշակային օրենսդրության միասնականացում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
57. «Ասպիրանտուրայում, օրդինատուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հետբուհական կրթության կանոնակարգում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ ԲՈՀ ՀՀ ԳԱԱ	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
58. «Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերականգնման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի պարտքերի վերականգնում	ՀՀ էներգետիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
59. «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2001/2002 ուսումնական տարվա ընդունելության անվճար ուսուցման տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ստանալու` ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքի իրականացման ապահովում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
60. Խմելու ջրի և կոյուղու համակարգի ֆինանսական առողջացման ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը	խմելու ջրի և կոյուղու համակարգի ֆինանսական առողջացում	ՀՀ կառավարությանն առընթեր ջրային ռեսուրսների պետական կոմիտե ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
61. Ընտանեկան նպաստների համակարգում ներառված ընտանիքների վերագրանցման գործընթացի սկիզբ	ընտանեկան նպաստների համակարգի հասցեականության բարելավում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	2001 թ. մարտի 15	
62. Ընտանեկան նպաստների արդյունավետության գնահատման ծրագրի իրականացման սկիզբ	ընտանեկան նպաստների համակարգի հասցեականության բարելավում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	2001 թ. մարտի 15	
63. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելը	կենտրոնացված կարգով գնումների իրականացում պահանջող գնման նվազագույն չափի բարձրացում և փոքր ու միջին ձեռնարկատիրության խթանում, կենտրոնացված գնումների արդյունավետության բարձրացում	ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մարտի 15	
64. Պետական տուրքի և ոչ հարկային եկամուտների գանձման աշխատանքների կանոնակարգման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	նշված եկամտատեսակների հավաքագրման գործում պետական մարմինների պատասխանատվության սահմանում, բյուջետային մուտքերի ապահովման արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. մարտի 15	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
65. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն առնվազն առաջին ընթերցմամբ ընդունելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում քննարկումների ապահովում	սնանկացման գործընթացի հետ կապված օրենսդրական խոչընդոտների հաղթահարում	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մարտի 15	
66. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի նախագիծն առնվազն առաջին ընթերցմամբ ընդունելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում քննարկումների ապահովում	իրավաբանական անձանց գրանցման բոլոր փուլերի միասնականացում, գրանցման և լուծարման ընթացակարգերի պարզեցում ու գրանցման ժամկետների կրճատում, գրանցման ապակենտրոնացված համակարգի, փաստաթղթերի օրինակելի ձևերի ներդրում, գրանցումը մերժելու հստակ հիմքերի սահմանում	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մարտի 15	
67. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի նախագիծն առնվազն առաջին ընթերցմամբ ընդունելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում քննարկումների ապահովում	լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների կրճատում, լիցենզավորման ընթացակարգերի պարզեցում և հստակեցում, լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու համար դատարանի որոշման առկայության պահանջի սահմանում	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մարտի 15	
68. «Ձարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի կողմից ներդրումների խթանման աշխատանքների արդյունավետության բարձրացման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնելը	ներդրումների խթանման աշխատանքների արդյունավետության բարձրացում	«Ձարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մարտի 15	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
69. Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի մասնավորեցման ժամանակացույցին համապատասխան մրցույթի հաղթողի հայտարարում և նրան բանակցությունների հրավերի ուղարկում	Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի մասնավորեցում և ցանցերի գործունեության արդյունավետության ապահովում	ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 407 որոշմամբ ստեղծված մասնավորեցման մրցութային հանձնաժողով ՀՀ էներգետիկայի նախարարություն	2001 թ. մարտի 15	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
70. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նախագիծն առնվազն առաջին ընթերցմամբ ընդունելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում քննարկումների ապահովում	շուկայի մասնակիցների լիցենզավորման պահանջի, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի ֆինանսական անկախության ապահովման մեխանիզմների սահմանում, ոչ ամբողջական հավաքագրումների դեպքում միջոցների բաշխման ՀՀ կառավարության հնարավորության բացառում, էլեկտրաէներգիայի շուկայի արտոնագրման, սակագների մշակման, պայմանագրերի հաստատման, շուկայում կանոնների հաստատման և հաճախորդների պաշտպանության գործառույթների իրականացման միջոցով նշված հանձնաժողովի կողմից էներգետիկ շուկայի կարգավորման պարտավորության ամրագրում, էներգետիկ և այլ ենթակառուցվածքների ընկերությունների սերվիստուտային իրավունքներին առնչվող իրավական խնդիրների լուծում (անհրաժեշտության դեպքում նաև այլ օրենքներում փոփոխությունների կատարում)	ՀՀ էներգետիկայի նախարարություն ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մարտի 15	
71. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի նախագիծն առնվազն առաջին ընթերցմամբ ընդունելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում քննարկումների ապահովում	հողային հարաբերությունների հստակեցում, մասնավորեցված ձեռնարկությունների զբաղեցրած հողի սեփականության իրավունքով հատկացում այդ ձեռնարկություններին և այդ հողերի համար սեփականության իրավունքի վկայագրերի անվճար տրամադրում	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մարտի 15	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
72. «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	արտահանման խթանում, ձեռնարկատիրությանն աջակցում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
73. Միջուկային և ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման կարգի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	միջուկային նորմերին համապատասխան ռադիոակտիվ նյութերի փոխադրման կանոնակարգում	Հայպետատոմհսկողություն	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	Հայպետատոմհսկողության միջոցների հաշվին
74. Միջուկային նյութերի պետական հաշվառման և հսկման կարգի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	միջուկային զենքի չտարածման կոնվենցիայի պայմանների կատարման կարգավորում	Հայպետատոմհսկողություն	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	Հայպետատոմհսկողության միջոցների հաշվին
75. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելը	մտավոր սեփականության իրավունքների հետ կապված խնդիրների լուծումը կողմերի փոխհամաձայնությամբ իրականացնելու հնարավորության սահմանում, մտավոր սեփականության իրավունքների հետ կապված հարաբերությունների հետազա ազատականացում	ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
76. Հայաստանի Հանրապետության օդային օրենսգրքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	համակարգի օրենսդրական կարգավորում	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
77. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	գիտության ֆինանսավորման կանոնակարգում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
78. «Դպրոցական դասագրքերի, ուսուցչի ձեռնարկների 2001 թվականի մրցույթի արդյունքների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	դպրոցական դասագրքերի, ուսուցչի ձեռնարկների մրցույթի արդյունքների հաստատում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
79. «Արտադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	արտադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության իրավական ապահովվածություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
80. «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	քաղաքական ապաստանի իրավունք տալու հիմքերի, կարգի, այդպիսի իրավունք ստանալու խնդրանքի մերժման, տրված իրավունքի դադարեցման պայմանների, ինչպես նաև դրանց առնչվող այլ հարաբերությունների կարգավորում	ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ծախսեր չեն ահանջվում:
81. «Բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց բնակարաններ հատկացնելու կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց բնակարաններ հատկացնելու կարգի սահմանում	ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
82. Հայաստանի Հանրապետության բնակավայրերի գլխավոր հատակագծերի մշակման փուլային ծրագրի կազմում	քաղաքաշինական պայմանների ու նախադրյալների համակարգված վերլուծության միջոցով բնակավայրերի և դրանց համակարգերի բնականոն կենսագործունեության, շրջակա միջավայրի բարելավման, բնակության համար նպաստավոր պայմանների ստեղծում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	Չի ահանջվում:

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
83. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերի և նախագծերի փորձաքննությամբ ընտրության մրցութային կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	փորձաքննությամբ հաստատվելիք գիտական ծրագրերի և նախագծերի ընտրության կանոնակարգում	ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ՀՀ ԳԱԱ	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
84. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպությունների տիպային (օրինակելի) կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ՀՀ ԳԱԱ-ի համակարգի գիտական կազմակերպությունների կարգավիճակի, գործառույթների և խնդիրների հստակեցում	ՀՀ ԳԱԱ	2001 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
85. «Բնակչության զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	զբաղվածության բնագավառի կատարելագործում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
86. Գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորական կազմակերպությունների մասնավորեցման և լավարկման հայեցակարգը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
87. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	արդյունաբերական սեփականության իրավական դաշտի կատարելագործում	ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
88. «Երիտասարդական և մանկական հասարակական կազմակերպություններին պետական աջակցություն ցուցաբերելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	երիտասարդամարդու սոցիալական կայացման, նրա ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության օգտագործելու համար պայմանների և երաշխիքների ստեղծում	ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
89. «Հայաստանի Հանրապետության Լոռու, Արագածոտնի մարզերի և Երևանի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	առողջապահության համակարգի բարելավման ծրագրի իրականացում, հիվանդանոցային ցանցի ռացիոնալացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
90. «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման փորձաքննության, հաստատման և փոփոխման ժամանակավոր կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	գոտևորման սկզբունքների ներդրումը քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի շրջանակներում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Չի ահանջվում:
91. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	գիտության ֆինանսավորման կանոնակարգում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
92. «Նախադպրոցական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	նախադպրոցական կրթության իրավական արժեքավորման ապահովման բարելավում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
93. «Լեզվաքաղաքականության պետական ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	լեզվաքաղաքականության նպատակային իրականացման ծրագրավորում	ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
94. «Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու կարգի և պայմանների սահմանում	ՀՀ արդարադատության նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
95. «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 22-ի N 599 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Մետրոպոլիտեն» ՊՓԲԸ-ի պետական պահպանության համար փոխհատուցման մեխանիզմի փոփոխություն, ՀՀ «Երկաթուղու շարժակազմ» ՊՓԲԸ-ի պահպանությունը նրա սեփական միջոցների հաշվին իրականացնելը, 1998 թվականի սեպտեմբերի 22-ի N 599 որոշման ցանկում չընդգրկված, սակայն ՀՀ ՆԳՆ պետական պահպանության ստորաբաժանումների կողմից փաստացի պահպանվող օբյեկտների ընդգրկում	ՀՀ ներքին գործերի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
96. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը		ՀՀ ներքին գործերի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
97. 2001 թ. գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման միջոցառումների իրականացման ընթացքի մասին ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը	սերմացուների անհրաժեշտ քանակների ճշտում, ակնկալվող միջազգային օգնության հաշվին դրանց ներկրում ու հատկացում գյուղացիներին, շուրջ 40 հազ. հա գարնանացանի աշխատանքների իրականացում, ոռոգման համակարգերի նախապատրաստում ոռոգման շրջանին	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
98. «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» ՀՀ օրենքից բխող «Բույսերի պաշտպանության ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ծառայության գործունեության կանոնակարգում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
99. «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» ՀՀ օրենքից բխող «Բույսերի կարանտինի պետական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ծառայության գործունեության կանոնակարգում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
100. «ՀՀ կառավարության 2000թ. մայիսի 12-ի N 239 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	նախատեսված է «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
101. «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ի Շահունյանի բազմամետաղային հանքավայրի շահագործման կազմակերպում և խտանյութի արդյունահանման ապահովում	ընկերության վերագործարկում, 850 հիմնական և 50 լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
102. Տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը	բարձր տեխնոլոգիաների զարգացման ապահովում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
103. «Նշանների միջազգային գրանցման մասին մադրիդյան համաձայնագրի արձանագրության համաձայն նշանի պահպանության մերժման մասին ծանուցման ժամկետի փոփոխության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	արդյունաբերական սեփականության իրավական դաշտի կատարելագործում	ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
104. «Միջուկային և ճառագայթային անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	միջուկային և ճառագայթային անվտանգության փորձաքննության, վերլուծության և գնահատման աշխատանքների արդյունավետության բարձրացում	Հայպետատոմհսկողություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Հայպետատոմհսկողության պահպանման ծախսեր, տեխնիկական աջակցություն ԱԷՄԳ, ԵՀ, ԱՄՆ-ի ՄՀԿ
105. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	մշակութային արժեքների պահպանման, տարածման, զարգացման և համաշխարհային հանրությանը պատշաճ մակարդակով ներկայացնելու համար պայմանների ստեղծում	ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
106. «Հանրապետական գնդակապարկուճային քարտադարանի կազմակերպման և գործունեության նյութատեխնիկական ապահովման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	քարտադարանի նյութատեխնիկական ապահովում	ՀՀ ներքին գործերի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
107. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	կենսաթոշակային օրենսդրության միասնականացում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	2001 թ. մարտի 3-ին տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
108. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ԲՊԻ վարչության ենթակա ստորաբաժանումների զինծառայողների նվազագույն պաշտոնային դրույքաչափերը ՆԳ մարմինների զինծառայողների նվազագույն դրույքաչափերին հավասարեցնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	պաշտոնային դրույքաչափերի հավասարեցում	ՀՀ ներքին գործերի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
109. «Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների խորհուրդներում (գործադիր մարմիններում) պետության կողմից լիազորված ներկայացուցիչների որակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
110. «ՀՀ պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի կատարման հաշվետվության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարում	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
111. Հայաստանի Հանրապետության ոռոգման համակարգի կառուցվածքային բարեփոխումների և համակարգի 2001-2005 թվականների ֆինանսական վիճակի բարելավման միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	կառուցվածքային բարեփոխումների և ֆինանսական վիճակի բարելավման միջոցառումների իրականացում	ՀՀ կառավարությանն առընթեր ջրային ռեսուրսների պետական կոմիտե ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, վարձավճարներ
112. «Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան» ՓԲԸ-ի աշխատանքների հետագա բարելավման միջոցառումների վերաբերյալ ՀՀ կառավարությունը առաջարկությունը ներկայացնելը	«Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան» ՓԲԸ-ի աշխատանքների հետագա բարելավում	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	2001 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
113. Մասնավորեցումից ստացված միջոցների օգտագործման աուդիտի մրցույթի ամփոփում և հաղթողի հայտարարում	մասնավորեցումից ստացված միջոցների օգտագործման նպատակայնության երաշխավորում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. մարտ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
114. Մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի ընդունման նպատակով ՀՀ Ազգային ժողովում քննարկումների ապահովում	մասնավորեցման գործընթացի շարունակում, 1998-2000 թվականների ծրագրում ներառված դեռևս չմասնավորեցված ընկերությունների ներառում 2001-2003 թվականների ծրագրում, մասնավորեցվող ընկերությունների մասնավորեցման եղանակների սահմանափակումների վերացում	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մարտ	
115. Մասնավորեցման գործընթացի մասին եռամսյակային հրապարակային հաշվետվությունների համակարգի ներդրման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը	մասնավորեցման գործընթացի մասին հրապարակային հաշվետվություններ ներկայացնելը	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն	2001 թ. մարտ	
116. «Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	աուդիտորական գործունեության զարգացում և կատարելագործում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. մարտ	
117. Պետական բյուջեի պարտքերի գրանցման ու դրանց մոնիտորինգի համակարգի կատարելագործում ու այդ նպատակով, անհրաժեշտության դեպքում, ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը	բյուջետային կարգապահության բարձրացում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. մարտ	
118. «Բանկերի սնանկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին (անհրաժեշտության դեպքում նոր օրենք) և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ու «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	բանկերի սնանկացման վտանգների կանխում ու սնանկացման գործընթացների արդյունավետության բարձրացում	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ)	2001 թ. մարտ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
119. «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	քրեակատարողական համակարգի աշխատողների համար համակարգի փոփոխությունից հետո ներկա սոցիալական պայմանների պահպանում	ՀՀ արդարադատության նախարարություն	2001 թ. մարտ	
120. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ կապված իրավական դաշտի հստակեցում	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մարտ	
121. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	գործող օրենսդրության կատարելագործում	ՀՀ արդարադատության նախարարություն	2001 թ. մարտ	
122. ՀՀ պետական եկամուտների նախարարության ներքին աուդիտի ծառայության ամրապնդում	նախարարության գործունեության արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. մարտ	
123. ՀՀ պետական եկամուտների նախարարության հարկային և մաքսային ստորաբաժանումների առավել սերտ համագործակցության ապահովում և այդ նպատակով, անհրաժեշտության դեպքում, ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը	հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. մարտ	
124. Հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների ծրագրերի մշակմանն ու իրականացմանը հարկատուների մասնակցության ապահովման մեխանիզմների վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը	հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումներին հասարակության աջակցության ապահովում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. մարտ	
125. Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության հետ համատեղ ՀՀ պետական եկամուտների նախարարության աշխատողների՝ 2001 թվականի վերապատրաստման ծրագրերի հաստատում	նախարարության աշխատողների որակավորման մակարդակի բարձրացում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. մարտ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
126. Հարկատուների սնանկացման և գույքի բռնագանձման ընթացակարգերի արդյունավետության բարձրացման ծրագրի հաստատում	հարկային պարտավորությունների անվերապահ գանձման ապահովում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն (ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ)	2001 թ. մարտ	
127. Հարկատուների մոտ իրականացվող ստուգումների հիման վրա ավելացված արժեքի հարկի խաչաձև ստուգումների համակարգի ներդրում	ավելացված արժեքի հարկի հաշվարկման հարաբերություններում հնարավոր չարաչափումների բացառում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. մարտ	
128. Սեփականաշնորհման հատուկ հաշվից 2000 թվականի վերջին ժամանակավորապես վերցված գումարների ամբողջությամբ վերականգնում	մասնավորեցումից ստացված միջոցների նպատակային օգտագործման ապահովում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. մարտի 31	
129. Կենսաթոշակների վճարումների գծով 2001 թվականի առաջին եռամսյակի ընթացքում (այդ թվում՝ առանձին ամիսների) պարտքերի ավելացման բացառում	կենսաթոշակների վճարումների գծով պետության պարտավորությունների կատարում	ՀՀ կառավարությանն առընթեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ	2001 թ. I եռամսյակ	
130. Ներդրումների խրախուսման ու գործարարության աջակցման խորհրդի կողմից ընդունված որոշումների համաձայն ներդրումների վարչարարական խոչընդոտների վերացման ու տնտեսավարող սուբյեկտների գործունեության հետ կապված լրացուցիչ ծախսերի նվազեցման ուղղությամբ կատարված առաջընթացի մասին եռամսյակային հաշվետվություններ ներկայացնելը	ներդրումների վարչարարական խոչընդոտների վերացման ու տնտեսավարող սուբյեկտների գործունեության հետ կապված լրացուցիչ ծախսերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի արդյունավետության ապահովում	«Ձարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ	սկսած 2001 թ. I	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
131. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նախագծի ամբողջությամբ ընդունման նպատակով ՀՀ Ազգային ժողովում քննարկումների ապահովում	շուկայի մասնակիցների լիցենզավորման պահանջի, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի ֆինանսական անկախության ապահովման մեխանիզմների սահմանում, ոչ ամբողջական հավաքագրումների դեպքում միջոցների բաշխման ՀՀ կառավարության հնարավորության քննարկում, էլեկտրաէներգիայի շուկայի արտոնագրման, սակագների մշակման, պայմանագրերի հաստատման, շուկայի կանոնների հաստատման և հաճախորդների պաշտպանության գործառնությունների իրականացման միջոցով նշված հանձնաժողովի կողմից էներգետիկ շուկայի կարգավորման պարտավորության ամրագրում, էներգետիկ և այլ ենթակառուցվածքների ընկերությունների սերվիտուտային իրավունքների առնչվող իրավական խնդիրների լուծում (անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ օրենքներում փոփոխությունների կատարում)	ՀՀ էներգետիկայի նախարարություն ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. ապրիլի 1	
132. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրման ծրագրին համապատասխան հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հաստատման ավարտ	հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հաստատման ավարտ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. ապրիլի 1	
133. «Մագիստրատուրայի 2001/2002 ուսումնական տարվա ընդունելության պետական պատվերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	բարձրագույն մասնագիտական կրթության շարունակականության ապահովում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
134. «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	«Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումների օպերատիվ արձագանքման ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչություն	2001 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	
135. «Զինծառայողների դրամական բավարարման, ինչպես նաև պարենային և հանդերձանքի ապահովման կամ դրա փոխարեն իրենց ցանկությամբ դրամական փոխհատուցում ստանալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	զինծառայողների դրամական, պարենային և հանդերձանքի ապահովման հարցերի կանոնակարգում	ՀՀ պաշտպանության նախարարություն	2001 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	
136. «Հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հանրակրթության բնագավառի իրավական ապահովման բարելավում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	
137. Ապառքների կուտակման պատճառների ուսումնասիրում և դրա հիման վրա ապառքների գանձման աշխատանքների կանոնակարգման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ապառքների գանձման աշխատանքների կանոնակարգում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	
138. Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի մասնավորեցման ժամանակացույցին համապատասխան մրցույթում հաղթողի հետ բաժնետոմսերի փոխանցման պայմանագրի կնքման ապահովում	Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի մասնավորեցում և նշված ցանցերի գործունեության արդյունավետության ապահովում	մասնավորեցման մրցութային հանձնաժողով ՀՀ էներգետիկայի նախարարություն	2001 թ. ապրիլի 15	
139. Էլեկտրաէներգետիկական շուկայի ստեղծման հայեցակարգի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	Էլեկտրաէներգետիկական շուկայի ստեղծման ժամանակացույցի հաստատում, մասնավորապես, խոշոր սպառողների և բաշխողների ու արտադրողների (ներմուծողների) միջև ուղղակի պայմանագրերի կնքման հնարավորության սահմանում	ՀՀ էներգետիկայի նախարարություն (ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի հետ համատեղ)	2001 թ. ապրիլի 15	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
140. Իրավական դաշտի ուսումնասիրում և դրա արդյունքներով շուկայական սկզբունքներին չհամապատասխանող իրավական ակտերը վերացնելու վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը	իրավական դաշտի համապատասխանեցում շուկայական սկզբունքներին	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
141. «Գովազդի լեզվի նկատմամբ հսկողությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչությանը վերապահելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	գովազդի անհրաժեշտ լեզվամակարդակի ապահովում	ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչություն	2001 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
142. Անուղղակի եղանակներով հարկերի հաշվարկման մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնելը	հարկային դաշտի բարելավում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
143. «Հայաստանի Հանրապետությունում հսկվող նյութերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հսկվող նյութերի նկատմամբ հսկողության բարելավում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
144. «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 8-ի N 352 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	սոցիալական ապահովագրության պարտադիր վճարների հավաքագրման արդյունավետության բարձրացում	ՀՀ կառավարությանն առընթեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ	2001 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
145. «Գիտական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	կրթության և գիտության ոլորտի իրավական ապահովվածության բարելավում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
146. «Աշխարհագրական անվանումների գրանցման և հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	աշխարհագրական անվանումների գրանցման և հաշվառման աշխատանքների կանոնակարգում	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2001 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
147. «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը	մամուլի և զանգվածային լրատվության միջոցների գործունեության իրավական դաշտի հստակեցում	ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչություն	2001 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
148. «Պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածությունները բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց սեփականաշնորհելու կարգի և սեփականաշնորհման ենթակա հանրակացարանների ցանկի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը	պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային տարածքները բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց սեփականաշնորհելու կարգի սահմանում և սեփականաշնորհման ենթակա հանրակացարանների ցանկի հաստատում	ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն	2001 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	
149. Առանց քրեական գործ հարուցելու տնտեսավարող սուբյեկտներում «ուժային» կառույցների կողմից սուղումներ իրականացնելու հնարավորությունը բացառելու նպատակով համապատասխան օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը	ներդրումային միջավայրի բարելավում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
150. Կանոնադրական կապիտալում 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս (բաժնետոմս) ունեցող ընկերությունների և պետական հիմնարկների հիմնական միջոցների օտարման նպատակով աճուրդի կազմակերպման ու անցկացման և մեկնարկային գնի հաշվարկման կարգերը հաստատելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը	պետական գույքի օտարման հետևանքով հարցերի առավել արդյունավետ կանոնակարգում	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
151. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը	ռազմական դրության ժամանակ (պատերազմական պայմաններում) բնակչության պաշտպանության հարցերի կանոնակարգում	ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
152. «Գործազուրկների մասնագիտական ուսուցման կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	միջոցների նպատակային օգտագործման արդյունավետության բարձրացում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
153. «Կրթության զարգացման պետական ծրագրի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	կրթության զարգացման պետական ծրագրի ամրագրում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
154. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	կրոնի ոլորտի իրավական դաշտի կատարելագործում	ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհուրդ	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
155. «Ղպրոցականների 2001 թ. ամառային հանգստի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ղպրոցականների ամառային հանգստի կազմակերպում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
156. «Հրապարակային գրվածքների և տիպային փաստաթղթերի լեզվական ձևավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հրապարակային գրվածքների և տիպային փաստաթղթերի լեզվական ձևավորման կանոնակարգում	ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
157. ՀՀ պետական եկամուտների նախարարության կողմից իրականացվող հսկիչ գնումների կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հարկային դաշտի բարելավում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
158. Սևանա լճի պահպանության և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման կարգավորման 2001 թվականի և առաջիկա տարիների հիմնական միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	Սևանա լճի և դրա պաշարների պահպանության, օգտագործման և վերականգնման բարելավում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
<p>159. Պետական սեփականություն հանդիսացող բաժնետնաս (բաժնետոմս) ունեցող ընկերությունների խորհուրդներում (գործադիր մարմիններում) պետության կողմից լիազորված ներկայացուցիչների ընտրության և նշանակման կարգի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>պետական սեփականություն հանդիսացող բաժնետնաս (բաժնետոմս) ունեցող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացում</p>	<p>ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>160. «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>մասնավորեցման ընթացքում կուտակված պարտքերի հետ կապված խնդիրների պարզեցված լուծում, համայնքներին սեփականության իրավունքի օտարումը որպես մասնավորեցման եղանակ սահմանելը, այդ եղանակով մասնավորեցման ընթացակարգերի սահմանում ու մասնավորեցումից հետո վերավաճառքի կանոնակարգում, ոչ կենսունակ ընկերությունների լուծարման գործընթացների պարզեցում և դրանց գույքը, անհրաժեշտության դեպքում, համայնքներին փոխանցելու մեխանիզմների հստակեցում, մասնավորեցման վերաբերյալ որոշման ընդունումից հետո մասնավորեցվող ընկերության բաժնետոմսերը ՀՀ պետական գույքի կառավարման նախարարությանը փոխանցելու ապահովում</p>	<p>ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն</p>	<p>2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>161. «Հայաստանի Հանրապետությունում արխիվային գործի զարգացման ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>արխիվային գործի հեռանկարային զարգացման ապահովում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչություն</p>	<p>2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
162. «Աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի ստեղծման և վարման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	աշխարհագրական անվանումների գրանցման և հաշվառման աշխատանքների կանոնակարգում	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
163. «Հայաստանի Հանրապետության Սյունիքի և Վայոց ձորի մարզերի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	առողջապահության համակարգի բարելավման ծրագրի իրականացում, հիվանդանոցային ցանցի ռացիոնալացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
164. «ՄԻԱՎ-ով վարակված և ՁԻԱՀ-ով հիվանդ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն բուժման նպատակով մուտք գործելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	վարակված և հիվանդ օտարերկրյա քաղաքացիներին բուժօգնություն ցույց տալու համար Հայաստանի Հանրապետություն մուտքի կազմակերպում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
165. Գեոդեզիայի և քարտեզագրության զարգացման հայեցակարգը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	տեղագրական մասշտաբային շարքի քարտեզների թարմացումը՝ օգտագործելով նոր տեխնոլոգիաներ	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
166. Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման հայեցակարգի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	առևտրային կազմակերպությունների վերակառուցման և նոր ընկերությունների գործունեության խթանում, մասնավոր հատվածի համար անշարժ գույքի մրցակցային ու թափանցիկ սկզբունքներով ձեռքբերման մատչելիության բարձրացում	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2001թ. ապրիլ 3-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
167. «Ուղեցույց դեպի Հայաստան» ծրագրի իրականացում	ինտերնետային ցանցում Հայաստանի մասին ամբողջական և մշտապես թարմացվող տեղեկությունների ապահովում	ՀՀ արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար «Ձարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ	2001թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	Ճապոնական րամաշնորհ, SATAC - II
168. «ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագրում» հոլոգրամի և տաք լամինացիայի կիրառման կապակցությամբ «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ հաստատված կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հոլոգրամի և տաք լամինացիայի կիրառում, կորցրած անձնագրի փոխարեն նոր անձնագիր տալու կարգի հաստատում	ՀՀ ներքին գործերի նախարարություն	2001 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
169. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելը	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ կապված իրավական դաշտի հստակեցում	ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. ապրիլ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
170. Էներգետիկայի բնագավառի չմասնավորեցված հատվածի վերաբերյալ ծրագրի ռազմավարության ծրագրի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	միջնաժամկետ հատվածում պահանջարկի հուսալի, արդյունավետ և նվազագույն գներով բավարարում, մասնավոր ներդրումների առավելագույն նակարդակի ապահովում, մասնավորեցման ենթակա ընկերությունների մասնավորեցման ժամկետների ու մեխանիզմների, էներգետիկ անվտանգության ապահովման պայմանների սահմանում, էլեկտրաէներգիա օգտագործողներին և բաշխիչ ցանցերին էլեկտրաէներգիայի ներմուծման հնարավորության ընձեռում, մինչև 2010 թ. ընկած ժամանակահատվածում նվազագույն ծախսերի ներդրումային պահանջների գնահատում	ՀՀ էներգետիկայի նախարարություն	2001թ. ապրիլ	
171. Հեռահաղորդակցության բնագավառը կարգավորող ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	կարգավորող անկախ մարմնի ստեղծում, այդ մարմնի կողմից առանց խտրականությունների փոխադարձ կապի ռեժիմի ներդրման, սակագների վերահավասարակշռման և կարգավորման, ինչպես նաև հաճախականությունների բաշխման, համարակալման և մուտքի իրավունքների հստակ ընթացակարգերի սահմանում	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2001 թ. ապրիլ	
172. 2001-2003 թվականների ընթացքում ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի նվազագույն չափի ավելացման ժամանակացույցը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության երաշխիքների ապահովում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. ապրիլ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
173. Պետական ընկերությունների գործունեության եռամսյակային ֆինանսական մոնիտորինգի համակարգի ներդրման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը	պետական ընկերությունների գործունեության վերահսկողության ու արդյունավետության բարելավում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2001 թ. ապրիլ	
174. «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	օրենքի կարգավորման դաշտից պետական արժեթղթերի շուկայում բանկերի գործունեության բացառում, օրենքում բանկերի առանձնահատկությունների արտացոլում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի և արժեթղթերի հանձնաժողովի հետ համատեղ)	2001 թ. ապրիլ	
175. Ապրանքների ներմուծման ու արտահանման հետ կապված մաքսային ընթացակարգերի վերանայում դրանց պարզեցման նպատակով	մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. ապրիլ	
176. «Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի 2001/2002 ուսումնական տարվա ընդունելության պետական պատվերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հետբուհական կրթության ապահովում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. մայիսի 1-ին տասնօրյակ	
177. Հարկվճարողների կողմից կատարված գործարքների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկությունների տրամադրման կարգը հաստատելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հարկերի գանձման արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. մայիսի 1-ին տասնօրյակ	
178. «Պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության օպտիմալացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հիգիենիկ-հակահամաճարակային ծառայության գործունեության բարելավում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. մայիսի 1-ին տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
179. Կանոնադրական կապիտալի համալրման համար ներկրվող գազի դրամայնացման կարգի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	գազի համակարգի ֆինանսական հոսքերի կարգավորում	ՀՀ էներգետիկայի նախարարություն	2001 թ. մայիսի 1-ին տասնօրյակ	
180. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի մասնավորեցման գործընթացի կանոնակարգման նպատակով համապատասխան օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	համայնքային սեփականություն հանդիսացող գույքի մասնավորեցման գործընթացի կանոնակարգում	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարար	2001 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	
181. «Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի ռացիոնալացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	կրթության համակարգի ռացիոնալացում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2001 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	
182. «Ժամանակավոր պաշտպանված անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	տարբեր ստիպողական հարկադիր հանգամանքների բերումով ՀՀ տարածքում հայտնված անձանց համար իրավական կարգավիճակի, ինչպես նաև նրանց իրավունքների ու պարտականությունների սահմանում	ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն	2001 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ծախսեր չեն պահանջվում
183. «Բնակչության միգրացիայի տեղեկատվական համակարգի ստեղծման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	միգրացիոն գործընթացների վերաբերյալ բազմակողմանի և ամբողջական տեղեկատվության ստացում, միգրացիոն գործընթացների կարգավորում, արդյունավետ պետական քաղաքականության մշակում և իրականացում	ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն	2001 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	Առաջին փուլը կպահանջի 10 մլն դրամ
184. «Դեղերի գրանցման, գրանցումն անվավեր ճանաչելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	դեղերի գրանցման գործընթացի կանոնակարգում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
185. «Հինավուրց երկիր-նոր հորիզոններ» խորագրով Նյու Յորքում կայանալիք համաժողովի կազմակերպում և անցկացում	Երդրումային ծրագրերը համաշխարհային ֆինանսական հանրությանը ներկայացնելը օտարերկրյա ներդրումների ներգրավում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ	2001 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	Համաշխարհային բանկ
186. «Օգտակար հանաճների հանքավայրերի շահագործման համար լեռնահատկացումների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	օգտակար հանքավայրերի կարգավորում հանաճների շահագործման	այլեռտեխնոլոգիան, ՀՀ բնապահպանության նախարարություն	2001 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	
187. «ՀՀ կառավարության 1999 թվականի ապրիլի 22-ի N 251 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հեղինակային վարձատրության համակարգի հստակեցում	ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալություն	2001 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	
188. «Բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց բնակվելու հետևանքով ժամանակավոր կացարանների կրած հաշվեկշռային վնասի փոխհատուցման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց բնակվելու հետևանքով ժամանակավոր կացարանների կրած հաշվեկշռային վնասի փոխհատուցման կարգի սահմանում	ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն	2001 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	
189. «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	առողջապահության համակարգի բարելավման ծրագրի իրականացում, հիվանդանոցային ցանցի ռացիոնալացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
190. Հանրապետության որոշ համայնքներում անշարժ գույքի հարկման նպատակով գնահատման փորձնական ծրագիրը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	անշարժ գույքի շուկայական մեխանիզմներով հարկման համակարգի ներդրման հետ կապված խոչընդոտների և դժվարությունների վերհանման ու դրանց լուծման մեխանիզմների մշակում	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ տարածքային կառավարման նախարար	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
191. «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համակարգում հատուկ կոչումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հատուկ կոչումների սահմանում	ՀՀ ներքին գործերի նախարարություն	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
192. Հարկային վարչարարության ծրագրի շրջանակներում «Բարենց» խմբի հետ հարկերի հաշվառման աշխատանքների ավտոմատացման 1998 թ. սկսած աշխատանքների ավարտում, այդ թվում՝ տարածքային հարկային մարմինների ֆունկցիոնալ վերակազմավորման և համակարգչայնացման ապահովում և կատարված աշխատանքների մասին ՀՀ կառավարությունը հաշվետվությունը ներկայացնելը	նախարարության համակարգի ավտոմատացման գործընթացի ավարտում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
193. Գնահատման մեթոդների ընտրության առավել արդյունավետ կազմակերպման նպատակով ՀՀ կառավարությունը առաջարկությունը ներկայացնելը	պետական գույքի գնահատման մեթոդների կատարելագործում	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
194. Պետական գույքի հաշվեկշռային մեթոդով գնահատման կարգի կատարելագործման նպատակով ՀՀ կառավարությունը առաջարկությունը ներկայացնելը	մասնավորեցման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
195. «Ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ներդրումային դաշտի կանոնակարգում և կատարելագործում, ներդրումների համար նախապայմանների ստեղծում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
196. WGS-84 համակարգում պետական գեոդեզիական ցանց ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ՀՀ պետական և միջազգային համակարգերով գեոդեզիական ցանցերի ստեղծումը՝ օգտագործելով արբանյակային GPS տեխնոլոգիաներ, որոնց ճշտությունը ապահովում են ներկա պահանջները	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
197. «Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում Հայաստանի ազգային հեռուստատեսության ծրագրի սփռումն ապահովելու միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հեռուստատեսային ցանցի վերազինում և արդիականացում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
198. Կենսաթոշակային բարեփոխումների ռազմավարության իրականացման առումով առաջընթացի գնահատում, դրա արդյունքների և, անհրաժեշտության դեպքում, ռազմավարության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունը կամ նոր ռազմավարության ծրագրի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	կենսաթոշակային ապահովագրության կենսունակ համակարգի ներդրում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
199. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ՀՀ ԳԱԱ-ի իրավական կարգավիճակի, գործունեության կարգի և գործառույթների հստակեցում	ՀՀ ԳԱԱ	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
200. «ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 31-ի N 531 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հասարակական կարգի պահպանության ընդգրկում	ՀՀ ներքին գործերի նախարարություն	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
201. «Զրամատակարարման և ջրահեռացման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի իրավական կարգավորում	ՀՀ կառավարությանն առընթեր ջրային ռեսուրսների պետական կոմիտե ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն Երևանի քաղաքապետարան	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
202. Առանց քրեական գործ հարուցելու տնտեսավարող սուբյեկտներում «ուժային» կառույցների կողմից ստուգումներ իրականացնելու հնարավորությունը բացառելու նպատակով համապատասխան օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելը	ներդրումային միջավայրի բարելավում	ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մայիս	
203. «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելը	սնանկացման ընթացակարգերի հստակեցում ու դրանց արդյունավետության բարձրացում, մասնավորապես, կառավարիչների վարձատրման սանդղակի վերանայում, փոքր ընկերությունների սնանկացման պարզեցված ընթացակարգերի ներդրում, ինչպես նաև օրենքի ներքին հակասությունների վերացում	ՀՀ կառավարության աշխատակազմ	2001թ. մայիս	
204. «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	հ ր ա պ ա ր ա կ ա յ ի ն ս ա կ ա ր կ ո լ թ յ ո ն ն ե ռ ի հետ կապված իրավահարաբերությունների կանոնակարգում	ՀՀ արդարադատության նախարարություն	2001 թ. եպտեմբերի 3-րդ տասնօրյակ	
205. Պետական եկամուտների նախարարության աշխատողների որակավորման քննությունների անցկացում և արդյունքների մասին հաշվետվությունը ՀՀ կառավարությունը ներկայացնելը	նախարարության աշխատողների մասնագիտական պատրաստվածության բարձրացում	ՀՀ պետական եկամուտների նախարարություն	2001 թ. մայիս	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
206. Ընկերությունների կենտրոնացված և ավտոմատ գրանցման գործընթացի ներդրման ծրագրի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ընկերությունների կենտրոնացված և ավտոմատ գրանցման գործընթացի ներդրում	ՀՀ արդարադատության նախարարություն	2001 թ. մայիս	
207. Ընկերությունների գրանցման ու լիցենզավորման ընթացակարգերը, գործարարությանն առնչվող օրենսդրական դաշտը նկարագրող տեղեկատվական նյութերի մատչելիության ապահովում, ինտերնետային համապատասխան էջի ձևավորում	գործարարությանն առնչվող օրենսդրական դաշտը նկարագրող տեղեկատվական նյութերի մատչելիության ապահովում	«Ձարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	2001 թ. մայիս	
208. Ստուգող մարմինների, դրանց թվի կրճատման, ստուգման գործառնությունների հստակեցման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը	ներդրումային միջավայրի բարելավում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մայիս	
209. Պետական հրդեհային հսկողության մասին կանոնադրության մեջ փոփոխությունների կատարում	կանոնադրության համապատասխանեցում շուկայական տնտեսության պահանջներին, տնտեսավարող սուբյեկտների գործունեությանն այդ ծառայության միջամտության հնարավորությունների սահմանափակում	ՀՀ ներքին գործերի նախարարություն	2001 թ. մայիս	
210. Սանիտարական ծառայության կանոնադրության մեջ փոփոխությունների իրականացում	հանրապետություն օտարերկրյա քաղաքացիների մուտքի հեշտացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2001 թ. մայիս	
211. Հայաստանի Հանրապետություն մուտքի վիզաներ և կացության վկայականներ տալու ընթացակարգերի պարզեցում և ժամկետների կրճատում	հանրապետություն օտարերկրյա քաղաքացիների մուտքի հեշտացում	ՀՀ ներքին գործերի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն	2001 թ. մայիս	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
<p>212. «Հայէներգո» ՓԲԸ-ում հաշվապահական և վարչարարական տեսանկյուններից երկու նոր գործառնությունների՝ մեծածախ կապալառու և ֆինանսական վճարահաշվարկներ, ձևավորումը՝ ի լրումն ընկերության՝ ազգային կարգավարական կենտրոնի գործառնության, և վճարահաշվարկային կենտրոնի կողմից տեղեկատվության հավաքման ու մշակման, վճարման գումարների հաշվարկման և էլեկտրաէներգիայի շուկայի մասնակիցներին ու նրանց համապատասխան մատակարարներին և կրեդիտորներին վճարումներ կատարելու հանձնարարականներ տալու կարգերի մշակում և հաստատում</p>	<p>էներգետիկ համակարգի տարբեր օղակների առավել արդյունավետ փոխգործո-ղության ապահովում</p>	<p>ՀՀ էներգետիկայի նախարարություն</p>	<p>2001 թ. մայիս</p>	
<p>213. էներգետիկայի համակարգի անվտանգության, տեխնիկական, բնապահպանական և տնտեսական արդյունավետության կանոնակարգերի, դրանց կիրառման ապահովման մեխանիզմներն ու ինստիտուցիոնալ հիմնական միջոցառումները միջազգային փորձին համապատասխանեցնելու միջոցառումների ծրագրի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>էներգետիկայի համակարգի հիմնակա-նում մասնավոր ընկերությունների զարգացում</p>	<p>ՀՀ էներգետիկայի նախարարություն</p>	<p>2001 թ. մայիս</p>	
<p>214. էներգետիկ համակարգին (կամ դրա անունից) պետա-կան ընկերությունների կողմից ապրանքների և ծառայությունների մատակարարումն առանց դրանց գների, վճարման պայմանների (վերջնաժամկետների, ապրանքային վարկի ձևակերպման դեպքում՝ վճարման ենթակա տոկոսների, վճարումների ուշացման դեպքում՝ գանձվող տուգանքների) մասին գրավոր պայմանագիրն արգելելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>էներգետիկ համակարգում վճարահաշվարկային հարաբերությունների հստակ կանոնակարգում</p>	<p>ՀՀ էներգետիկայի նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն</p>	<p>2001 թ. մայիս</p>	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
215. «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի հիմնադրման, դրականոնադրական կապիտալի ձևավորման, բնական գազով կապիտալի համալրման գործարքի, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեում և մասնակից ընկերությունների հաշվեկշիռներում դրա արտացոլման մասին մանրամասն տեղեկանքի հրապարակում	գործարքի մասին հրապարակային տեղեկատվության ապահովում	ՀՀ էներգետիկայի նախարարություն	2001 թ. մայիս	
216. Ոռոգման և «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի համակարգերում կառուցվածքային բարեփոխումների և հավատարմագրային կառավարման մեխանիզմների ներդրման նպատակահարմարության հարցը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	ջրնուղ-կոյուղու համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում	ՀՀ կառավարությանն առընթեր ջրային ռեսուրսների պետական կոմիտե՝ շահագրգիռ մարմինների հետ համատեղ	2001թ. մայիս	
217. Կառուցապատման աշխատանքների իրականացման թույլտվություն տալու ընթացակարգերի պարզեցում, շինարարական ընկերությունների լիցենզավորման համար ներկայացվող պահանջների նվազեցում	ներդրումային միջավայրի բարելավում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2001 թ. մայիս	
218. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի մասնավորեցման գործընթացի կանոնակարգման նպատակով համապատասխան օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելը	համայնքային սեփականություն հանդիսացող գույքի մասնավորեցման գործընթացի կանոնակարգում	ՀՀ կառավարության աշխատակազմ	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
219. Պետության սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի օտարման նոր կանոնակարգերի հաստատում	պետության սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի կառավարման արդյունավետության բարձրացում	ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն	2001 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	

Միջոցառումը	Նպատակը (արդյունքը)	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
220. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (անհրաժեշտության դեպքում՝ նոր օրենքի) նախագիծը ՀՀ կառավարություններ կայացնելը	օրենքի համապատասխանեցում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին և «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքին, պարզեցված ընթացակարգերի ներդրում փոքրաթիվ բաժնետերեր ունեցող ընկերությունների համար, կանոնադրական կապիտալի համալրման հարցերի լուծում, կապիտալի լրացուցիչ սահմանափակումների վերացում, բաժնետերերի տարեկան ժողովների գործընթացների պարզեցում, ընկերությունների վերակազմավորման գործընթացների և բաժնետերերի պաշտպանության մեխանիզմների միջազգային չափանիշներին համապատասխան պարզեցում և թափանցիկության բարձրացում	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2001 թ. մայիս	
